

Հաճախակի տրվող հարցեր

Հավելվածի մասին

Որո՞նք են Ինտերնետային և Մոբայլ բանկային համակարգերի տարբերությունները:

Թե Մոբայլ և թե Ինտերնետային բանկային համակարգերը նախատեսված են մեր հաճախորդներին առաջադեմ օնլայն ծառայություն տրամադրելու համար: Երկու համակարգերն էլ գործում են մեկ ծրագրային հենքով, որի արդյունքում ցանկացած անհատական հարմարեցում, ինչպիսիք են շահառուների ավելացումը, վճարումների մտապահումը, անվտանգ հաղորդագրությունները և այլն, որոնք արված են Ինտերնետային բանկային համակարգում Ձեր կողմից, հասանելի կլինեն նաև Մոբայլ բանկային համակարգում: Սակայն Մոբայլ բանկային համակարգն ունի որոշ գործառնական սահմանափակումներ:

Կան որոշակի գործարքներ, որոնք չեն կարող իրականացվել Մոբայլ համակարգով և դրանք իրականացնելու համար անհրաժեշտ է մուտք գործել Ինտերնետային բանկային համակարգ:

Ո՞ր մոբայլ սարքերի միջոցով է հասանելի հավելվածը:

Այս հավելվածը հասանելի է թե սմարթֆոնների և թե դյուրակիր համակարգիչների (պլանշետների) համար. iPhone®, iPad®, և iPod Touch, որոնցում գործում է iOS 9.0 կամ ավելի բարձր օպերացիոն համակարգ, ինչպես նաև Androids™, որոնցում գործում է 4.4 կամ ավելի բարձր օպերացիոն համակարգ:

Ինչպե՞ս ներբեռնել հավելվածը:

Հավելվածը ներբեռնելու և օգտագործելու ամբողջ ընթացքում անհրաժեշտ է ինտերնետային կապի առկայություն: Հավելվածը հասանելի է համապատասխանաբար Apple App StoreSM-ում (Apple սարքերի համար), և Google Play™-ում (Android™ սարքերի համար): Մոբայլ հավելվածը ներբեռնելու համար անհրաժեշտ է որոնման դաշտում մուտքագրել «HSBC Mobile Banking», և բերված ցանկից ընտրել Էյչ-Էս-Բի-Սի-ի լոգոն կրող հավելվածը: Այնուհետ հետևեք էկրանին հայտնվող հրահանգներին հավելվածն օգտագործելու համար:

Ինչպե՞ս ստեղծել մոբայլ բանկային գաղտնաբառը:

Մոբայլ բանկային համակարգի գաղտնաբառ ստեղծելու համար մուտք գործեք Ինտերնետային Բանկային համակարգ: Այս գաղտնաբառը Դուք օգտագործելու եք հավելված մուտք գործելու համար Ինտերնետային բանկային համակարգի օգտագործողի անվան և հիշվող պատասխանի հետ միասին: Որպես

այլընտրանք, Դուք կարող եք Մոբայլ բանկային համակարգ մուտք գործել նաև Ձեր օգտագործողի անվան, հիշվող պատասխանի և անհատական անվտանգության սարքի միջոցով:

Կարո՞ղ եմ օգտագործել Մոբայլ հավելվածը, եթե գրանցված չեմ Ինտերնետային բանկային համակարգում:

Մոբայլ բանկային համակարգի հավելվածից օգտվելու համար Դուք պետք է Ինտերնետային բանկային համակարգի գործող օգտատեր լինեք:

Մոբայլ բանկային հավելված մուտք գործելու համար Ձեզ անհրաժեշտ է ունենալ Ինտերնետային բանկային համակարգի Ձեր Օգտագործողի անունը, Հիշվող պատասխանը, Անվտանգության սարքը կամ Ինտերնետային բանկային համակարգի միջոցով ստեղծված Մոբայլ բանկային համակարգի գաղտնաբառը:

Որքա՞ն է Մոբայլ Բանկային ծառայության սակագինը:

Դուք կարող եք ներբեռնել հավելվածն անվճար, սակայն Մոբայլ Բանկ-ից օգտվելու համար անհրաժեշտ է գրանցվել Ինտերնետային բանկային ծառայության համար: Եթե արդեն օգտվում եք Ինտերնետային բանկային համակարգից, ապա կարող եք սկսել օգտագործել հավելվածը:

Կարո՞ղ եմ օգտագործել հավելվածը արտերկրում գտնվելու ժամանակ:

Այո, սակայն մենք հորդորում ենք այս հավելվածն օգտագործել միայն ապահով կապի դեպքում: Հասարակական Wi-Fi-ի կամ հասարակական վայրերում առկա ինտերնետ կապի միջոցով միանալու դեպքում Դուք վտանգի եք ենթարկում Ձեր մոբայլ սարքը և Ձեր տվյալները: Անհրաժեշտ է զգուշավորություն ցուցաբերել՝ ապահովելու Ձեր մոբայլ սարքի անվտանգությունը: Բացի դա, Ձեր մոբայլ օպերատորը կարող է համապատասխան գումար գանձել Մոբայլ Բանկ հավելվածն օգտագործելու ժամանակ ինտերնետային կապից օգտվելու համար: Արտերկրում հավելվածն օգտագործելու դեպքում այդ գանձումները կարող են տարբեր լինել: Մոբայլ Բանկ հավելվածն օգտագործելու կամ ներբեռնելու համար որոշ երկրներում հնարավոր է սահմանափակումներ կիրառվեն:

Անվտանգություն

Կարո՞ղ եմ օգտվել Մոբայլ Բանկ համակարգից՝ օգտագործելով Ինտերնետ Բանկային համակարգի իմ ներկայիս մուտքային տվյալները:

Այո, Մոբայլ Բանկային ծառայությունից Դուք կարող եք օգտվել Ձեր Ինտերնետային բանկային ծառայության գործող օգտագործողի անվան, հիշվող պատասխանի և ինտերնետային բանկային համակարգի անվտանգության սարքի միջոցով: Բացի վերոհիշյալ տվյալներից, Ինտերնետային բանկային համակարգի միջոցով կարող եք նաև Մոբայլ Բանկային գաղտնաբառ ստեղծել և Մոբայլ Բանկ հավելված մուտք գործել Ձեր Օգտագործողի անվան, հիշվող պատասխանի և մոբայլ գաղտնաբառի միջոցով:

Մոբայլ բանկի գաղտնաբառը ստեղծելուց հետո կարո՞ղ եմ այն փոխել:

Դուք կարող եք ցանկացած ժամանակ փոխել Ձեր մոբայլ բանկի գաղտնաբառը: Պարզապես մուտք գործեք Ինտերնետային բանկային համակարգ և ծախսակողմյան մենյուի «Ծառայություններ» բաժնից սեղմեք «Փոխել Մոբայլ գաղտնաբառը» հղումը: Հետևեք էկրանի հրահանգներին գաղտնաբառը փոխելու համար:

Կարո՞ղ եմ օգտվել իմ անհատական ինտերնետային բանկային ծառայությունից, եթե մոբայլ բանկի իմ մուտքային տվյալները սխալ մուտքագրելու հետևանքով արգելափակվել են:

Ոչ, եթե մոբայլ բանկային Ձեր հաշիվը արգելափակվել է մի քանի անգամ տվյալների սխալ մուտքագրման հետևանքով, Դուք չեք կարող մուտք գործել Ինտերնետային բանկային համակարգ: Ձեր մուտքային տվյալները ապաբլոկավորելու և Ինտերնետային կամ Մոբայլ բանկային համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է կապ հաստատել Ինտերնետային բանկային համակարգի աջակցության կենտրոնի հետ՝ զանգահարելով +374 (60) 655 444:

Եթե կորցնեմ մոբայլ սարքը, արդյո՞ք բանկային տվյալներս անվտանգ կլինեն:

Մենք հոգ ենք տարել, որ Ձեր հաշիվների վերաբերյալ ոչ մի տեղեկություն չպահպանվի հեռախոսի մեջ: Ամեն անգամ, երբ մուտք եք գործում հավելված և ճշգրիտ մուտքագրում եք Ձեր անվտանգության տվյալները, Դուք անվտանգ ձևով կապ եք հաստատում մեր սերվերների հետ: Գործարքներն ավարտելուց հետո մի մոռացեք դուրս գալ համակարգից «Ելք»-ի միջոցով:

Մենք հորդորում ենք մեր հաճախորդներին զգուշավոր լինել հասարակական վայրերում մոբայլ սարքերն օգտագործելիս: Ձեր հեռախոսը պաշտպանելու համար PIN կամ ծածկագիր օգտագործեք, կանխարգելելու երրորդ անձի կողմից

ձեր կորցրած կամ գողացված հեռախոսի օգտագործելու փորձը:

Ձեր գաղտնաբառերը և անվտանգության տվյալները ապահով տեղում պահեք, որպեսզի Ձեր էլեկտրոնային հաշիվները հասանելի չլինեն ուրիշներին: Գաղտնաբառը պետք է լինի յուրօրինակ և շատ լավ պաշտպանված: Խիստ կարևոր է, որ Ձեր գաղտնաբառերը և կամ անվտանգության տվյալները Ձեր հեռախոսի կամ պլանշետի մեջ չգրանցեք:

Եթե կասկածում եք, որ Ձեր գաղտնաբառը կամ անվտանգության տվյալները վտանգված են, կամ եթե կորցրել եք Ձեր հեռախոսը, խնդրում ենք անմիջապես փոխել Ձեր Մոբայլ գաղտնաբառը, հիշվող պատասխանը և անվտանգության հարցերը: Ձեր բոլոր գաղտնաբառերը փոխելու համար մուտք գործեք անհատական Ինտերնետային բանկային համակարգ, Հաշվի ամփոփում էջի ձախակողմյան մենյուից ընտրեք «Ծառայություններ» բաժինը, և սեղմեք «Փոխել մոբայլ գաղտնաբառը», «Փոխել հիշվող հարցը և պատասխանը», «Փոխել անվտանգության հարցը և պատասխանը»:

Օգնության կարիք զգալու դեպքում գանգահարեք մեզ +374 (60) 655 444 հեռախոսահամարով:

Եթե դուրս չգամ համակարգից «Ելք»-ի միջոցով՝ հավելվածը կաշխատի^օ, թե՞ ավտոմատ կերպով աշխատանքը կդադարեցվի:

Մոբայլ բանկային համակարգը 10 րոպե ոչ ակտիվ մնալուց հետո ավտոմատ կերպով կդադարեցվի: Ի տարբերություն Ինտերնետային բանկային համակարգի, Մոբայլ համակարգում չկան բացվող ծանուցումներ, որոնք հիշեցնում են ժամանակի սպառման մասին:

Հավելվածում աշխատանքն ավարտելու կամ ժամանակի սպառվելու դեպքում մի մոռացեք դուրս գալ համակարգից «Ելք» կոճակի միջոցով:

Ինչպե՞ս կազդի իմ մուտքային վավերապայմանների վրա այն, որ ես փոխեմ սարքս կամ SIM քարտս կամ ջնջեմ հավելվածը սարքից:

Հավելվածը պահվում է Ձեր սարքի հիշողության մեջ, ուստի SIM քարտը կամ բջջային օպերատորը փոխելիս, այն ոչ մի փոփոխության չի ենթարկվի: Եթե Դուք փոխում եք Ձեր սարքը, այդ դեպքում ջնջեք հավելվածը հեռախոսից և ներբեռնեք նոր սարքի մեջ: Սա ոչ մի կերպ չի ազդի՝ Ձեր հաշվի կամ մուտքային վավերապայմանների վրա, Ձեր գաղտնաբառը ևս կմնա նույնը:

Գործառնություններ

Ինչպիսի՞ գործարքներ կարող են կատարել Մոբայլ բանկային համակարգում:

Մոբայլ բանկային հավելվածով Դուք կարող եք կատարել հետևյալ գործարքները.

- Փոխանցումներ Ձեր հաշիվների միջև
- Փոխանցումներ երրորդ անձանց՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի, հայաստանյան բանկերի և օտարերկրյա բանկերի հաշիվներին
- Կրեդիտ քարտի վճարումներ այն շահառուներին, որոնց տվյալներն արդեն ավելացված են Ինտերնետային բանկային համակարգի միջոցով
- Նոր ժամկետային ավանդի ձևակերպում
- Ուղարկել անվտանգ հաղորդագրություն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանին

Կարո՞ղ եմ Մոբայլ համակարգում ավելացնել նոր շահառու վճարումներ կատարելու համար:

Ինտերնետային բանկային համակարգում առկա վճարումների շահառուների տվյալները հասանելի կլինեն նաև Մոբայլ համակարգում, և Դուք կարող եք վճարումներ կատարել՝ ընտրելով այդ շահառուի տվյալները: Սակայն եթե ցանկանում եք նոր շահառու ավելացնել, ապա պետք է մուտք գործեք Ինտերնետային բանկային համակարգ, ձախակողմյան մենյուից մտնել «Վճարումներ» բաժինը, և հետևել էկրանի հրահանգներին: Ինտերնետային բանկային համակարգով նոր շահառու ավելացնելու համար անհրաժեշտ է ունենալ անվտանգության սարքը:

Ի՞նչ տիպի փոխանցումներ է հնարավոր իրականացնել Մոբայլ Բանկային համակարգում

Բոլոր փոխանցումները, որոնք հասանելի են Ինտերնետային Բանկային համակարգում, հնարավոր է իրականացնել նաև Մոբայլ հավելվածում, մասնավորապես.

1. Փոխանցումներ Ձեր Էյչ-Էս-Բի-Սի Բանկում ունեցած հաշիվների միջև
2. Փոխանցումներ Էյչ-Էս-Բի-Սի Բանկում հաշիվ ունեցող այլ շահառուների
3. Փոխանցումներ ՀՀ այլ բանկերում հաշիվներ ունեցող շահառուների
4. Արտերկրյա և արտարժույթով փոխանցումներ

Ինտերնետային բանկային համակարգի միջոցով հիշված փոխանցումները նույնպես հասանելի են Մոբայլ Բանկային համակարգում: Դուք կարող եք նաև կատարել ապագա ամսաթվով փոխանցումներ Մոբայլ հավելվածում, սակայն պարբերական փոխանցումներ ստեղծելու հնարավորությունը հասանելի է միայն Ինտերնետային բանկային համակարգում:

Գործառույթների տեսանկյունից, ո՞րն է գաղտնաբառով և անվտանգության սարքով համակարգ մուտք գործելու միջև տարբերությունը:

Մոբայլ բանկային հավելված մուտք գործելու համար երկու տարբերակ կա՝ գաղտնաբառով կամ անվտանգության սարքով: Երկու դեպքում էլ պահանջվում է մուտքագրել Ինտերնետային բանկային համակարգի Օգտագործողի անունը և Հիշվող պատասխանը: Սակայն եթե անվտանգության սարքը Ձեզ մոտ չէ և չեք կարող անվտանգության ծածկագիր գեներացնել, ապա կարող եք մուտք գործել օգտագործելով մոբայլ գաղտնաբառը:

Միայն գաղտնաբառով մուտք գործելու դեպքում կարող եք իրականացնել գործարքներից շատերը, սակայն որոշակի գործարքներ իրականացնելու համար, ինչպիսիք են երրորդ անձանց արվող փոխանցումները և անվտանգ հաղորդագրության ուղարկումը, համակարգը Ձեզնից կպահանջի հավելված մուտք գործել անվտանգության սարքով գեներացված ծածկագրի միջոցով:

Սա արվում է հաճախորդի անվտանգությունը ապահովելու նպատակով, որպեսզի հաճախորդը կարողանա պարզ գործարքներ կատարել, նույնիսկ եթե չի ցանկանում օգտագործել անվտանգության սարքը, իսկ որոշ գործարքներ պաշտպանված են անվտանգության ավելի բարձր մակարդակով:

Կարո՞ղ եմ կատարել վարկային վճարում Մոբայլ համակարգում:

Մոբայլ համակարգով Դուք կարող եք փոխանցում կատարել Ձեր վարկային հաշվին, սակայն միայն մեկ տեսակի փոխանցում է հնարավոր իրականացնել՝ «Մայր գումարի վճարում»:

«Վարկի ամբողջական վճարում», «Հերթական մայր գումարի վճարում» և «Ժամկետանց մայր գումարի և տոկոսի վճարում» փոխանցման տեսակները հասանելի են միայն Ինտերնետային բանկային համակարգով: Եթե ցանկանում եք կատարել սույն փոխանցումներից որևէ մեկը, խնդրում ենք մուտք գործել Ինտերնետային բանկային համակարգ:

Թարմացվել է՝ 14/01/2019 15:00